25
ՀՈՒՆԻՍԻ
2020

Luys Lnyu®

GRECO

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՐՄՆԻ՝ ԳՐԵԿՈ-Ի 2019Թ. ԶԵԿՈՒՅՑԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՈՎ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԳ ՄՅՈՒՍ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՐՄՆԻ՝ ԳՐԵԿՈ-Ի 2019Թ. ԶԵԿՈՒՅՑԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՈՎ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԳ ՄՅՈՒՍ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Luys Lnyu®

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ԳՐԵԿՈ-Ի ԶԵԿՈՒՅՑԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԱԼԳ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍՈՎ 2

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 4

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 6

4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 9

5. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԲՈԼՈՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԱՆՁԱՆՑ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020թ. հունիսի 3-ին Եվրոպայի Խորհրդի հակակոռուպցիոն մարմինը՝ «Ընդդեմ կոռուպցիայի պետությունների համախումբը» (GRECO), հրապարակել է իր տարեկան զեկույցը[1] 2019թ. մասով, որտեղ գնահատում է, թե ինչպես են անդամ երկրները կյանքի կոչել ԳՐԵԿՈ-ի գնահատման 4-րդ փուլի հանձնարարականները՝ խորհրդարանականների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ:

Ավելի վաղ՝ 2020թ. փետրվարին, ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրել էր ԳՐԵԿՈ-ի գնահատման 4-րդ փուլի Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ 2-րդ զեկույցի հայերեն թարգմանությունը[2]: ԳՐԵԿՈ-ն իր 4-րդ փուլի գնահատման զեկույցում Հայաստանին ներկայացրել էր 18 հանձնարարական: Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցում ԳՐԵԿՈ-ն հանգել է այն եզրակացությանը, որ հանձնարարականներից 5-ին Հայաստանը կատարել է բավարար անդրադարձ, 1-ին առհասարակ անդրադարձ չի կատարել, մնացած 12 հանձնարարականները կատարվել են մասամբ: Այս զեկույցը հնարավորություն է տալիս հասկանալու, թե որ հանձնարարականների կատարման ընթացքում են ՀՀ իշխանությունները բացթողումներ կատարել:

Սույն վերլուծությամբ փորձել ենք ներկայացնել Հայաստանին և Արևելյան գործընկերության (ԱԼԳ) անդամ մյուս երկրներին տրված գնահատականները՝ համեմատության մեջ: Միաժամանակ, անդրադարձել ենք 4-րդ փուլի գնահատման զեկույցում Հայաստանին ներկայացված այն հանձնարարականներին, որոնք բավարար չափով չեն իրականացվել կամ իրականացման ընթացքում իշխանությունները թույլ են տվել էական բացթողումներ:

---

[1] GROUP OF STATES AGAINST CORRUPTION (GRECO), Anti-corruption trends, challenges and good practices in Europe & the United States of America,03.06.2020, https://rm.coe.int/20th-general-activity-report-2019-of-the-group-of-states-against-corru/16809e8fe4 (այցելվել է 23.06.2020թ.):

[2] ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԿՐՈՐԴ ԶԵԿՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆ, Ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից՝ իր 84-րդ լիագումար նիստում, 02.2020, http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_8286802158531_Greco-Report-on-Armenia_ARM.pdf (այցելվել է 23.06.2020թ.):

1. ԳՐԵԿՈ-Ի ԶԵԿՈՒՅՑԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԱԼԳ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍՈՎ

Այսպես, համաձայն 2020թ. հունիսի 3-ին Եվրոպայի Խորհրդի հակակոռուպցիոն մարմինի՝ «Ընդդեմ կոռուպցիայի պետությունների համախումբի» (ԳՐԵԿՈ-ի) հրապարակած զեկույցի՝ 2019-ին Հայաստանը իրականացրել է ընդհանուր առմամբ 24 հանձնարարականների 37.5%-ը, իսկ հանձնարարականների 62.5%-ը մասնակի է իրականացրել: Միաժամանակ, ընդհանրապես չիրականացված հանձնարարականներ չեն եղել:

Ուշագրավ է, որ Հայաստանում հիմնականում իրականացվել են դատավորներին և դատախազներին վերաբերող հանձնարարականները, մինչդեռ խորհրդարանականներին վերաբերող հանձնարարականների մեծ մասը իրականացվել են մասամբ: Այսպես, խորհրդարանականներին վերաբերող ընդհանուր 7 հանձնարարականներից ամբողջությամբ իրականացվել են 14.3%-ը, իսկ մնացած 85.7%-ը իրականացվել է մասամբ: Փոխարենը դատավորներին վերաբերող 10 հանձնարարականներից ամբողջությամբ իրականացվել է 40%-ը, իսկ մնացած 60%-ը իրականացվել է մասնակիորեն: Դատախազների մասով ամբողջությամբ իրականացվել է ընդհանուր 7 միջոցառումների 57.1%-ը, իսկ մնացած 42.9%-ը՝ մասամբ:

Վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ իշխանությունները հակակոռուպցիոն հանձնարարականները իրականացնելիս առաջնահերթությունը տվել են դատական համակարգում իրականացվող բարեփոխումներին, մինչդեռ խորհրդարանականներին վերաբերող հանձնարարականների մասով հիմնականում բավարարվել են մասնակի լուծումներով:

ԱԼԳ երկրներից զեկույցում անդրադարձ է կատարվում նաև Ադրբեջանի, Վրաստանի և Մոլդովայի ցուցանիշներին: Այսպես, Ադրբեջանը ամբողջությամբ իրականացրել է ընդհանուր 21 հանձնարարականների 61.9%-ը, 23.8%-ը իրականացրել է մասնակիորեն, իսկ 14.3%-ը առհասարակ չի իրականացրել:

Վրաստանը ամբողջությամբ իրականացրել է ընդհանուր 18 հանձնարարականների 38.9%-ը, 44.4%-ը իրականացրել է մասնակիորեն, իսկ 16.7%-ը առհասարակ չի իրականացրել: Մոլդովան ամբողջությամբ իրականացրել է

ընդհանուր 18 հանձնարարականների 22.2%-ը, 50%-ը իրականացրել է մասնակիորեն, իսկ 27.8%-ը առհասարակ չի իրականացրել:

Փաստորեն, Հայաստանը ամբողջությամբ իրականացված հանձնարարականների ցուցանիշներով վերոհիշյալ երկրներից գերազանցում է միայն Մոլդովային, փոխարենը այս չորս երկրների շարքում միայն Հայաստանը չունի ընդհանրապես չիրականացված հանձնարարականներ:

ԳՐԵԿՈ-ի հակակոռուպցիոն հանձնարարականների իրականացումը Հայաստանի, Մոլդովայի, Ադրբեջանի և Վրաստանի կողմից 2019 թվականին

Երկրներ		Խորհրդարա-նականներ	Դատավորներ	Դատախազներ	Ընդհանուր
Հայաստան	Հանձնարար. թիվը	7	10	7	24
	Ամբողջությամբ իրականացված	14 %	40%	57.1%	37.5
	Մասնակի իրականացված	85.7%	60%	42.9%	62.5
	Չիրականացված				
Վրաստան	Հանձնարար. թիվը	4	7	7	18
	Ամբողջությամբ իրականացված	25%	42.9%	42.9%	38.9%
	Մասնակի իրականացված	75%	42.9%	28.6%	44.4%
	Չիրականացված		14.3%	28.6%	16.7%
Ադրբեջան	Հանձնարար. թիվը	4	7	10	21
	Ամբողջությամբ իրականացված	50%	57.1%	70%	61.9%
	Մասնակի իրականացված	25%	28.6%	20%	23.8%
	Չիրականացված	25%	14.3%	10%	14.3%
Մոլդովա	Հանձնարար. թիվը	6	7	5	18
	Ամբողջությամբ իրականացված	16.7%	28.6%	20%	22.2%
	Մասնակի իրականացված	33.3%	71.4%	40%	50%
	Չիրականացված	50%		40%	27.8%

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳՐԵԿՈ-ի առաջին հանձնարարականը վերաբերում էր ԱԺ-ում օրենսդրական գործունեության թափանցիկության բարձրացմանը: ԳՐԵԿՈ-ն գտել է, որ այս հանձնարարականը կատարվել է մասամբ. մասնավորապես՝ օրենքների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների գործելակերպը, ըստ էության, հետևողական չէ: Օրինակ՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է 2019 թվականի հունիսի 25-ին՝ առաջին ընթերցմամբ, չի ներկայացվել հանրային քննարկման, չի ենթարկվել փորձագիտական քննության, չի հրապարակվել «www.e-draft.am» կայքում:

Իշխանությունները թեևս այս օրենքի փոփոխությունների հրատապ ռեժիմը ներկայացրել են որպես «խորհրդարանական նախաձեռնության բացառիկ դեպք», որի համար պարտադիր խորհրդակցությունների անհրաժեշտություն չի եղել: Մինչդեռ նախագծով նախատեսվում էր կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման նոր կարգ, ինչպես նաև վերապահվում էին նոր լիազորություններ: Նախագիծը առաջ էր բերել քաղաքացիական հասարակության, ոլորտի մասնագետների դժգոհությունը, մտահոգություններ էր արտահայտել Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան, քանի որ այն նշանակալի հետընթաց էր պարունակում արդեն իսկ առկա կարգավորումների համեմատ: Նման կարևոր նախագծի ընդունումը՝ առանց հանրային քննարկումների, որևէ կերպ չի կարող հիմնավորվել հրատապությամբ:

Մտահոգությունների շարքում ԳՐԵԿՈ-ն նշել է, որ չնայած որոշումների ընդունման արագացված ընթացակարգի կիրառման դեպքերը նվազել են, սակայն այն շարունակել է կիրառվել նոր խորհրդարան ներկայացված օրենքների նախագծերի 15 տոկոսի դեպքում: ԳՐԵԿՈ-ն ընդգծել է, որ օրենքների ընդունման արագացված ընթացակարգերը պետք է կիրառվեն միայն հստակ սահմանված բացառիկ դեպքերում:

Ուշագրավ է, որ առավել կարևոր նախագծերի ներկայացման և ընդունման ծայրաստիճան արագացված պրակտիկան Ազգային ժողովում շարունակվել է նաև հետագայում: Մասնավորապես, 2020թ. ընթացքում ԱԺ-ն ընդունել է մի շարք աղմկահարույց և հանրային նշանակալի կարևորություն ունեցող օրենքներ և որոշումներ՝ առանց պատշաճ հանրային քննարկման (այդ թվում՝

Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին, որը տեղի ունեցավ արտահերթ ռեժիմով՝ ժամերի ընթացքում, Լանզարոտեի կոնվենցիայի վավերացումը): Արդյունքում, խորհրդարանական մեծամասնությունը ոչ միայն շրջանցել է հանրային քննարկումների անցկացումը, այլև արհեստական խոչընդոտներ է ստեղծել խորհրդարանական մյուս ուժերի համար՝ նախագծերին բավարար մանրամասնությամբ ծանոթանալու և իրենց դիրքորոշումը նախապատրաստելու համար:

ԳՐԵԿՈ-ն 2-րդ հանձնարարականում առաջարկել էր ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք և այն հասանելի դարձնել հանրության համար, այն լրացնել դրա իրականացման համար անհրաժեշտ գործնական միջոցներով: ԳՐԵԿՈ-ն գտել է, որ այս հանձնարարականը կատարվել է մասամբ. արձանագրել է, որ պատգամավորների համար նախատեսված՝ շահերի բախման և բարեվարքությանն առնչվող հարցերի ամբողջական շրջանակի մասին համապատասխան ուղղորդում պարունակող վարքագծի կանոնագիրք դեռևս առկա չէ: Դեռևս չի իրականացվել նաև կանոնավոր մասնագիտական վերապատրաստում և խորհրդատվություն:

3-րդ հանձնարարականի շրջանակներում ԳՐԵԿՈ-ն առաջարկել էր համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող պատգամավորների նկատմամբ կիրառվող և նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական գործունության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները: Այս հանձնարարականը, ԳՐԵԿՈ-ի գնահատմամբ, նույնպես կատարվել է մասամբ, քանի որ քննության են ենթարկվել պատգամավորների կողմից կողմնակի գործունեության արգելքի շրջանցմանը առնչվող որոշ գործեր, սակայն առկա է «կառուցվածքային» խնդիր, որի լուծման համար անհրաժեշտ է գործադրել համակարգային ավելի մեծ ջանքեր:

Ուշագրավ է, որ Հայաստանում վերջին շրջանում տեղի ունեցող ներքաղաքական զարգացումները իշխանական շրջանակները փորձում են մեկնաբանել նաև բիզնեսի և քաղաքականության տարանջատման տրամաբանության ներքո: Սակայն ԳՐԵԿՈ-ի գնահատականները հստակ ցույց են տալիս, որ ՀՀ իշխանություններից ակնկալվում է ոչ թե այս ուղղությամբ անհատական և անձնավորված գործողություններ, այլ կառուցվածքային խնդրի լուծում՝ համակարգային մեծ ջանքերի միջոցով:

4-րդ հանձնարարականում ԳՐԵԿՈ-ն առաջարկել էր զգալիորեն ամրապնդել պատգամավորների կողմից էթիկայի և վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգը և ապահովել էթիկայի կանոնների և անհամատեղելիության դեպքերի ու լրացուցիչ գործունեության, շահերի բախման և նվերների ընդունման վերաբերյալ կանոնների վերահսկողությունը, նորմերի կատարումը՝ համարժեք պատասխանատվության ենթարկելու միջոցով: Այս հանձնարարականը ևս մասամբ է կատարվել: ԳՐԵԿՈ-ի գնահատմամբ՝ էթիկայի հանձնաժողովը պատգամավորների շահերի բախման և անհամատեղելիության պահանջների հետ կապված հարցերում բավականաչափ ակտիվ չէ:

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳՐԵԿՈ-ն նաև գնահատականներ է տվել դատավորների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված հանձնարարականների կատարման ընթացքին: Անդրադառնանք դրանցից ամենաուշագրավներին:

7-րդ հանձնարարականի շրջանակներում ԳՐԵԿՈ-ն առաջարկել էր բարեփոխել դատավորների պաշտոնների համալրման, առաջխաղացման և պաշտոնից ազատման ընթացակարգերը, այդ թվում՝ ամրապնդելով այդ ընթացակարգերում դատական իշխանության դերը և նվազեցնելով Հանրապետության նախագահի դերը, պահանջելով նրանից՝ տալ իր որոշումների գրավոր հիմնավորումները, և ապահովելով այդ ընթացակարգերի ժամանակ ընդունված ցանկացած որոշման դատական կարգով բողոքարկման հնարավորությունը: Այս հանձնարարությունը կատարվել է մասամբ. ԳՐԵԿՈ-ն նշել է, որ թեև նշանակման որոշումների սահմանադրականության հարցը կարող է վիճարկվել Սահմանադրական դատարանում, բողոքարկման մեխանիզմներ պետք է նախատեսվեն պաշտոնի նշանակման, առաջխաղացման և լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումների համար:

ԳՐԵԿՈ-ն 8-րդ հանձնարարականում առաջարկել էր վերանայել դատավորների նկատմամբ հարուցվող կարգապահական վարույթում արդարադատության նախարարության դերակատարությունը, ներդնել երաշխիքներ՝ ապահովելու համար, որ կարգապահական վարույթը չօգտագործվի որպես ներգործություն կամ դատավորների նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու միջոց, ներառյալ՝ դատավորների համար կարգապահական որոշումները դատարան բողոքարկելու հնարավորությունը:

Այս հանձնարարականի մասով ԳՐԵԿՈ-ն նշել է, որ այն կատարվել է մասամբ: Մասնավորապես, արդարադատության նախարարի՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը պահպանվել է: ԳՐԵԿՈ-ն իր ափսոսանքն է հայտնել, որ արդարադատության նախարարը դեռևս ունի այդ գործառույթը, ինչպես նաև իրավունք՝ ստանալու տեղեկություններ այն ընթացիկ դատական գործերի նյութերի վերաբերյալ, որոնց վերաբերյալ դեռևս չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: ԳՐԵԿՈ-ն պնդել է, որ արդարադատության նախարարի դերը կարգապահական վարույթներում պետք է դադարեցվի: ԳՐԵԿՈ-ն նաև ափսոսանք է հայտնել, որ ներդրված չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման պատշաճ մեխանիզմ:

Ինչպես տեսնում ենք, ԳՐԵԿՈ-ն առաջարկել էր ներդնել երաշխիքներ՝ ապահովելու համար, որ կարգապահական վարույթը չօգտագործվի որպես ներգործություն կամ դատավորների նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու միջոց: Թեև իշխանությունները մատնանշել են օրենսդրական պահանջն առ այն, որ քրեական գործերով մինչդատական քննության փուլում և ոչ քրեական գործերով այլ վարույթների շրջանակներում դատավորի նկատմամբ գործողությունները պետք է կատարվեն՝ առավելագույնս ապահովելով գաղտնիություն և դատավորի հեղինակության ու անկախության նկատմամբ հարգանք, սակայն փաստացի վերջին շրջանում քաղաքականապես զգայուն գործեր քննող դատավորների մասնավոր կյանքին, բնակարանի անձեռնմխելիությանը տեղի են ունեցել լուրջ միջամտություններ, նախաքննական տվյալների արտահոսք (բավական է նշել, դատավորներ Ալեքսանդր Ազարյանի, Դավիթ Գրիգորյանի, Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի շուրջ ստեղծված իրավիճակները): Մի շարք աղմկահարույց քրեական գործերի մասնակցող դատավորների նկատմամբ իրականացվող հետապնդումները տարբեր քաղաքական և իրավական շրջանակների կողմից մեկնաբանվում է որպես ոչ ցանկալի որոշումներ կայացրած դատավորների նկատմամբ իրականացվող հաշվեհարդար: Պատահական չէ, որ այս հարցի շուրջ ԳՐԵԿՈ-ի մտահոգությունները պահպանվել են:

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման պատշաճ մեխանիզմի բացակայությունը իշխանությունները փորձել են բացատրել սահմանադրական կարգավորումների արդյունքում ստեղծված խոչընդոտներով, համաձայն որոնց դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով

Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան: Սակայն, սահմանադրական նշված նորմը որևէ կերպ չի արգելում Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման մեխանիզմի ներդրումը՝ առավել ևս, երբ մեկ այլ սահմանադրական նորմ սահմանում է, որ ՀՀ-ում բարձագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է:

9-րդ հանձնարարականի շրջանակներում ԳՐԵԿՈ-ն առաջարկել էր ներմուծել արդյունավետ կանոններ և մեխանիզմներ՝ արդարադատություն իրականացնելիս դատավորների գործունեությանն անհարկի միջամտելու դեպքերը բացահայտելու և այդպիսի միջամտություն իրականացնող կամ իրականացնելու փորձ կատարող դատավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

Այս հանձնարարականի հետ կապված՝ ՀՀ իշխանությունները նշել են, որ ԲԴԽ-ն որոշում է կայացրել, որտեղ մանրամասն նկարագրվում է անհարկի միջամտության արգելքը, մասնավորապես՝ նշելով, որ չի թույլատրվում որևէ միջամտություն, այդ թվում՝ հեռախոսային և այլ բնույթի հաղորդակցություն հանրային իշխանության ներկայացուցչի կամ դատարանի նախագահի հետ, կամ այդ առնչությամբ հրապարակային հայտարարություններ անել, ինչպես նաև քննության առարկա գործի առնչությամբ տեղեկատվություն ստանալու պահանջներ ներկայացնել: Իշխանությունները նշել են, որ առայժմ դատավորներից որևէ բողոք չի արձանագրվել:

Չնայած վերոհիշյալ պարզաբանումներին, ԳՐԵԿՈ-ն նշել է, որ այս հանձնարարականը կատարվել է մասամբ: Նաև նշել է, որ ցանկանում է ավելին իմանալ կանոնների և ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների գործնական կիրառման մասին՝ իրազեկման և վերապատրաստման ձևով:

ԳՐԵԿՈ-ն առաջարկել է 11-րդ հանձնարարականի շրջանակներում իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն՝ դատավորների գործունեությանն անհարկի միջամտությունը, դատական իշխանությունում շահերի բախումը և կոռուպցիան կանխարգելելու ուղղությամբ: Մասնավորապես, առաջարկել է բոլոր դատավորների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացում՝ էթիկայի և վարքագծի, դատական անաչառության և անկախության, ինչպես նաև շահերի բախումը և կոռուպցիան կանխարգելելու վերաբերյալ, որոնք պետք է կազմակերպվեն դատական իշխանության սերտ մասնակցությամբ: Առաջարկվել է նաև դատական համակարգում

գաղտնի խորհրդատվության տրամադրում՝ դատավորների իրազեկության մակարդակը բարձրացնելու համար:

ԳՐԵԿՈ-ն այս հանձնարարականը նույնպես համարել է մասամբ կատարված և կոչ է արել ապահովել գաղտնի խորհրդատվություն և բոլոր պաշտոնավարող դատավորների համար մշակել էթիկայի կանոնների, դատական անկողմնակալության, անկախության և նմանատիպ թեմաներով կանոնավոր և պարտադիր վերապատրաստման ծրագրեր: Ակնկալվել է, որ հանձնարարականի բոլոր մասերի առնչությամբ պետք է զգալիորեն ավելի շատ ջանքեր գործադրվեն և մշտական բնույթի միջոցառումներ ձեռնարկվեն:

«Դատական օրենսգրքում» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններով նախատեսված դատավորների բարեվարքության գնահատման, իրավիճակային հայտարարագրի մեխանիզմները նշանակալիորեն ընդլայնում են ի սկզբանե հայտարարագիր ներկայացնելու պարտականություն չունեցող անձանց վերաբերյալ բանկային և օրենքով գաղտնիք համարվող այլ բնույթի լայն տեղեկություններ ստանալու հնարավորությունները, ինչը կարող է հանգեցնել մասնավոր կյանքի պաշտպանության անհամաչափ թուլացման: Դրանով նաև ռիսկեր են ստեղծվում դատավորների գործունեությանը լայնորեն միջամտելու համար: Իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահված նոր գործառույթների իրականացման գործիքակազմը մի կողմից պարզ չէ, իսկ մյուս կողմից՝ առկա է մեկ այլ մարմնի գործառույթների դաշտ ներխուժելու վտանգ:

4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման հանձնարարականների կատարման մասով ուշագրավ են ԳՐԵԿՈ-ի հետևյալ գնահատականները.

15-րդ հանձնարարականի շրջանակներում ԳՐԵԿՈ-ն առաջարկել էր իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն՝ դատախազների գործունեությանն անհարկի միջամտությունը, ինչպես նաև դատախազական ծառայությունում շահերի բախումը և կոռուպցիան կանխարգելելու համար: Մասնավորապես, առաջարկել էր բոլոր դատախազների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացում՝ էթիկայի և վարքագծի, անկողմնակալության ու անկախության, շահերի բախումը և կոռուպցիան

կանխարգելելու վերաբերյալ, նաև դատախազական ծառայությունում գաղտնի խորհրդատվության տրամադրում:

ԳՐԵԿՈ-ն եզրակացրել է, որ 15-րդ հանձնարարականը մասամբ է կատարվել. մասնավորապես, բոլոր դատախազների համար էթիկայի կանոնների վերաբերյալ պարտադիր և կանոնավոր մասնագիտացված վերապատրաստում դեռևս չի ներդրվել: Թեև դատախազների համար ստեղծվել է խորհրդատվության տրամադրման մեխանիզմ, այնուամենայնիվ, վերջինս կարգապահական մարմիններից տարանջատված չէ:

5. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԲՈԼՈՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԱՆՁԱՆՑ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

ԳՐԵԿՈ-ն 16-րդ հանձնարարականում առաջարկել էր մշակել պատգամավորների, դատավորների և դատախազների կողմից նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ, տալ այնպիսի հստակ սահմանումներ, որոնք ընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնաիրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները: Առաջարկել էր նաև ներմուծել ստացված նվերների մասին վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող հատուկ դեպքում՝ նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերների մասին:

ԳՐԵԿՈ-ն այս հանձնարարականը նույնպես համարել է մասամբ կատարված. մասնավորապես, նշել է, որ օրենսդրության մեջ դեռևս առկա են նվերի սահմանման հետ կապված մի քանի անորոշ եզրույթներ, որոնք հստակեցման կարիք ունեն: Ավելին, նվերների մասին հայտնելու շեմը շարունակում է բավական բարձր մնալ:

18-րդ հանձնարարականում ԳՐԵԿՈ-ն առաջարկել էր ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար պատգամավորների, դատավորների և դատախազների նկատմամբ կիրառվող՝ գույքի հայտարարագրման վերաբերյալ կանոնների արդյունավետ հսկողությունը և կատարման ապահովումը՝ մասնավորապես ամրապնդելով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության անկախությունը, դրան վերապահելով ներկայացված հայտարարագրերը մանրակրկիտ ստուգելու, խախտումների դեպքերն ուսումնասիրելու, վարույթ հարուցելու և կանոնների խախտման դեպքում տալ արդյունավետ, համաչափ և համոզիչ պատասխանատվության միջոցներ կիրառելու հստակ մանդատ, լիազորություն և բավարար ռեսուրսներ:

Այս հանձնարարականը նույնպես մասամբ է կատարվել: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» նոր օրենքով մրցութային խորհուրդը հեռացվում է ԿԿՀ-ի անդամների նշանակման գործընթացից, և ներդրվում է թեկնածուների ուղղակի առաջադրման համակարգ (մեկ թեկնածու առաջադրվում է Կառավարության կողմից, մեկը՝ խորհրդարանի իշխող կուսակցության կողմից, երկու թեկնածու՝ խորհրդարանի երկու ընդդիմադիր կուսակցությունների կողմից և մեկ թեկնածու՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից): Այդպիսի մոդելի հետ կապված հիմնական մտահոգությունը քաղաքականացման զգալի ռիսկն է: Դա հակակոռուպցիոն մարմինների համար կենսական նշանակություն ունեցող հարց է, քանի որ այդ մարմինները քաղաքական միջամտությունից և ազդեցությունից զերծ պահելը դրանց արդյունավետության ապահովման հիմնական սկզբունքն է: Այս դեպքում Կառավարությունը և իշխող խորհրդարանական խմբակցությունը կարող են հանձնաժողովի մեծամասնությանը վերահսկել:

ԳՐԵԿՈ-ն նշել է, որ հասկանում է իշխանությունների արագ գործելու վճռականությունը, սակայն իշխանություններին կոչ է անում ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անկախությունը, մասնավորապես՝ վերջինիս հավասարակշռված և կայուն կազմի ու թափանցիկ ընթացակարգերի միջոցով: ԳՐԵԿՈ-ն շեշտել է նաև, որ այս հանձնարարականը մեծապես վերաբերում է կոռուպցիայի կանխարգելման մարմնի գործառնական անկախությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իր եզրակացության մեջ ԳՐԵԿՈ-ն նշել է, որ ավելի մեծ առաջընթաց է ակնկալվում օրենսդրական նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների մասով, ինչպես նաև ակնկալվում է, որ նոր օրենսդրության ընդունման համար արագացված ընթացակարգերից օգտվելու դեպքերը կնվազեն: Պատգամավորները դեռևս չունեն համապարփակ վարքագծի կանոնագիրք, որը ներառի բարեվարքությանն առնչվող հարցերի վերաբերյալ համապատասխան ուղղորդում: Գործնականում ավելի շատ քայլեր են անհրաժեշտ՝ պատգամավորների համապատասխանությունը ձեռնարկատիրական գործունեության մեջ ներգրավվածությունն արգելող կանոններին ապահովելու նպատակով:

ԳՐԵԿՈ-ն նշել է, որ բարձր է գնահատում նվերներ ընդունելու հարցում ընդլայնված կանոնները, սակայն կարծում է, որ դրանք կարելի է ավելի հստակեցնել և պատշաճ կերպով վերահսկել: Նշել է նաև, որ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անկախությունը քաղաքական ազդեցությունից և ճնշումներից

առանցքային նշանակություն ունի և կախված է վերջինիս հավասարակշռված ու կայուն կազմից, թափանցիկ ընթացակարգերից: ԳՐԵԿՈ-ն եզրակացրել է, որ հանձնարարականների կատարման ներկայիս ցածր մակարդակը կանոնակարգի 31-րդ հոդվածի 8.3-րդ կետի իմաստով «ընդհանուր առմամբ անբավարար է»:

Այսպիսով, ԳՐԵԿՈ-ի զեկույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի իշխանությունները մի շարք հանձնարարականների իրականացման ուղղությամբ գործադրել են անբավարար ջանքեր: Արդյունքում, տարբեր ուղղություններով առկա են կիսատ լուծումներ և լուրջ թերացումներ, ինչը ևս մեկ անգամ ի ցույց է դնում Հայաստանում հակակոռուպցիոն պայքարի մասին իշխանությունների բարձրագոչ հայտարարությունների և այդ ուղղությամբ արված իրական քայլերի անհամարժեքությունը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*